

# ԱԽԱԼՔԱԼԱԿԻ ԳԱԼԻԵՐԻ ԵՐԿՐԱՇԱՐԺՈՒ ԵՒ ՕԳՆՈՒ- ԹԻՒՆԸ ԱՐԿՐԱՄԵՍԼ ՆԵՐԻՆ

Ախալքալակի գաւառի գիւղերին դեկտ. 19-ի մեծ երկրաշարժով հասցրած աղէքը աւելի էլ ծանրացաւ յաճախ կրկնւող երկրաշարժներով, որոնցից ամեն ազգալին եղան յունւարի 2-ին և ապա նաև յունւարի 22-ին: Յունւարի 12-ին 26 և 29-ին թիվի խոսում, նահանգապետի նախագահութեամբ կազմւած գլխաւոր կոմիտեի մէջ կարդացած գիւղերից յայփնւեց հերեւեալը.

Վնասւած գիւղերի թիւը . . . . . 21

որից 19-ը Ախալքալակի, 2-ը Գորւայ գաւառում:

Սպանւածների թիւը . . . . . 241

Վիրաւորների թիւը . . . . . 55

Հիւանդացածների թիւը . . . . . 195

Կորորւած եղջիւրաւոր անասունների թիւը . 2.570

(որից խոշոր տաւար 921, այծ ու ոչխար 1.649)

Կործանւած գիւղերում ողջ մնացածների և կարօսիւալների թիւն է շուրջ . . . . . 4.500

Դրամական նւէրներ ց26 Յունւարի ժողով-  
ւած էր մօտ . . . . . 140.000 ռ.

Այդ գումարից 5.000 ռ. յարկացրած է վարձադրութեան՝  
սպանւած անասունները վլատակներից հանելու և թաղելու—օդի վարակման դէմն առնելու համար: Պարսպարւածներին դրւում է  
ամեն հոդուն Յ ռուբլի ամսական: Վիրաւորեալներին և հիւանդներին հասցնուում է բժշկական օգնութիւն:

Վնասւած գիւղերից բոլորովին կործանւած են՝

Մերենիա (130 տուն), Մեծ Սամսար (47 տ.), Փոքր-Սամսար (50 տ.), Իլուրիլլա (70 տ.) և Բեժանօ (122 տ.). Եսկ մնացեալներում Բաղինօ, Կաջօ, Բուղաշէն, Օլովերոր, Մաջադիս, Ալագովա, Դղթիլիսա, Տըրկնա, Մոլիփառ և այլն, շատ տներ ճաքել և մասմբ միան փլւել են. այս վերջիններում մի քանի մարդկանց միայն զոհ է եղել, մի քանի բառնեակ էլ անասուն է կովորւել:

Երկրաշարժի գեղերը կառավարութիւնը լրկեց երկրաբան Վէրէքրին, պեղի երկրաբանական յարկութիւնները ուսումնասիրելու համար. այդ կապւած էր այն գործնական նպագուակի հետ, թէ կարելի է արդեօք աշետի գեղերում վերաբնակել, թէ անհրաժեշտ է արկածեալներին այլ գեղ բնակեցնելը. Զիւների պատճառով հետազոտութիւնը կարելի չէ եղել կարարել, նաև Տարացիուր լճի շուրջը բարձիք է յայգնեւել որ տների աւելի լաւ շինւածքով վերաբնակութիւնը կարելի է. մանաւանդ կոտորների ձեւը, որով նորա 1 $\frac{1}{2}$  արշին հասպութիւն ունին, պէտք է փոխարինել թեթև կոտորներով։

Ախալքալակի դաւառի ազէտը ամբողջ Կովկասի բացառիկ ցաւակցութիւնը շարժեց և արթնացրեց ժողովրդի մէջ օգնութեան գալու զգացմունքը։ Սրկածեալները զրիթէ բացառապէս հայեր լինելով՝ նաև նւիրաբերութիւնների մէջ կովկասի հայութիւնը մի առանձին զգայնութիւն ցոյց տանց, ու ժողովրդի կողմից նւիրաբերութիւնները անհամեմապ մասով հայերի կողմից եղանակ նւէրների համար մասնակցութիւնը հայտանակ տեղերում զրիթէ ընդհանուր էր. անհագներ և դնդեսական մարմին կազմող կազմակերպութիւններ—իրար անցան օդնութեան ձեռք մեկնելու։ Եւ, չնայած առ երկոյթ ամենուրեք ցոյց դւած զգայնութեան, եզրակացութիւնը բաւականին անմիսիթարական է զոնէ հարուստ դասակարգի վերաբերմամբ։ Սրկածեալներին օգնելու համար, զլխաւոր կոմիտէի հաշով՝ պահանջւում է 3—400.000 ռուբլի. մինչդեռ մինչև ներկայ յունաւարի վերջը ժողովւած է ընդամենը մօդ 140.000 ռուբլի, որի մէջ է Թագաւոր-Կայսեր 50 հազար ռուբլի նւէրը, այլ և Կալսերական Բարձրութիւնների 1.500, Կաթողիկոսի 1000 ու Կաթողիկոսի հրամանով դրւած մի քանի հազար ռուբլի եկեղեցական գումարները, որպէս և երկրիս Կառավարչապետի 3.000 նւէրները.

այնուհետ որ ժողովրդական նուէրները կազմում են ինչոր 75.000 և միայն, պահանջածի հազիւ  $\frac{1}{5} - \frac{1}{4}$  մասը։ Այս հաշւի մէջ չէ Բաքուցիների առանձին ժողովարարութիւնը, որի մասին սպոց ոչ մի փեղեկութիւն չայտաբարւած չէ. այնպեղի ժողովարարութեան նախաձեռնողները, ըստ երեսութիւն, աւելի յաջող գործ կարարած կը լինէին, եթէ էն սկզբից կաշկանդած չըլինէին իրենց ձեռնարկութիւնը որրանոց հիմնելու կանխագաղափարով. և աւելի ևս յաջող ելք կ'ունենար գործը, եթէ ժողովարարութեան համար նախաձեռնողներ բնաւ չըլինէին և ամեն ոք հետեւ ընդհանուր հոսանքին։

Գալ անգամ, երբ բոլոր ժողովարարութիւնները աւելի յայտնըւած կը լինեն նուիրաբուների անուններով, մենք կը ներկայացնենք բոլոր կարեւորագոյն նուէրների ցանկը։

Ա.